Այս առթիւ կարևոր կ՛համարիմք Վ․ եհ․ Կաթողիկոսի առ Գերապատիւ Պատրիարքն Կ․ Պօլսոյ ի 11-ն ամսոյս ուղղած հեռագրին և առ Գ․ եր․ Մկրտիչ Արք Եպիսկոպոս Գերմանիկեցի ուղևալ Կոնդակի պատճէնները հաղորդել մեր սիրելի Ազգայնոց ի գիտութիւն։

---

(ՊԱՏՃԷՆ ՀԵՌԱԳՐԻՆ)

Ի Կոստանդնուպօլիս

Ի Խասգիւղ

Դեկտ. 11։

ԱՌ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ Կ. ՊՕԼՍՈՅ ։

Ժողովն Կոստանդնուպօլսոյ ընդ Ձերով նախագահութեամբ անդր քան զիւր Սահմանադրութիւն և զիրաւասութիւնն յուզէ և լուծէ զեկեղեցական փափուկ խնդիրս, որպիսի է Սսոյ և Աղթամարայն. և որ ցաւալին է Սրբազնութիւն Ձեր ընդ քօղով մերս փոխանորդութեան՝ ընդդէմ Նուիրական աւանդութեանց սրբոց Հարց և իրաւանց Մայր Աթոռոյս յօժարէ գործել յանուն մեր՝ առանց մեր գիտութեան, և վստահեալ՝ հաստատել նոր Սահմանադրութիւն, յանձնապաստան հեղինակել ինքեան օրէնս, ՈՐ ՄԻ ՄԻԱՅՆ ԱՆԿ Է ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ ԸՍՏ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՕՐԻՆԻ ԳՈՒՄԱՐԵԼՈՅ ԸՆԴ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։ ՈՒՍՏԻ ՆՈՒԻՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՄԵՔ Ո՛Չ ԿԱՐԵՄՔ ՕՐԻՆԱՒՈՐ ՃԱՆԱՉԵԼ ՋԱՅԴՊԻՍԻ ՈՐՈՇՈՒՄ, և առ ի զառաջն առնուլ ազգավնաս հետևանաց յապագային, ազդ առնեմք Ձեզ զգուշանալ ի խոտորելոյ ի շաւղաց Հարց Սրբոց։

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԷՈՐԳ

(ԳԱՂՂ. ՊԱՏՃԷՆ ՀԵՌԱԳՐԻՆ.)

CONSTANTINOPLE. GOUMGABOU.

AU PATRIARCHE ARMÉNIEN

DE CONSTANTINOPLE.

L'assemblée de Constantinople sous Votre présidence excite et résoud des questions délicates ecclésiastiques telles que de Sis et d'Agthamar au delà de sa constitution et ses droits. Et il est bien triste que Votre Eminence sous le voile de notre vicariat se plait agir EN NOTRE NOM SANS NOTRE CONNAISSANCE ET EN SE CONFIANT AUTORISER UNE NOUVELLE LÉGISLATION CONTRE LES TRADITIONS SACRÉES DES SAINTS PÈRES ET LES DROITS DU PREMIER SIÉGE, CE QUI NE CONVIENT QU'A L'ASSEMBLÉE GÉNÉRALE CONVOQUÉE D'APRÉS LA LOI ECCLÉSIASTIQUE SOUS LA PRÉSIDENCE DU CATHOLICOS DE TOUS LES ARMÉNIENS.

DONC LES LOIS SACRÉES DE NOTRE ÉGLISE ET NOUS NE POUVONS NULLEMENT RECONNAITRE COMME LÉGITIME UNE PAREILLE DÉCISION, et pour prévenir les conséquences nuisibles á la nation dans l'avenir nous Vous avertissons de prendre garde á Vous écarter du chemin des Saints Pères.

PATRIARCHE SUPRÊME ET CATHOLICOS

DE TOUS LES ARMÉNIENS

GUEVORK IV.